Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

825
Д-59

1931 г.

Զ. ԹՈՒԹԵՐՑՍ

ԿԱՐՄՐԻԿԸ

82ս.
Ր-59

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

24 JUL 2013

923

1454

82-93 | Ռոբերտս, Ջ
Ռ-61 | Կարմրիկը

Ա.25- | 15/XI 39 | Ալեքսանդրա
039 | 5/6 17/6 38

821.
Ռ-59

Ա. 52681

6 NOV 2011

Ջ· ՌՈՒԲԵՐՏՍ

ԿԱՐՄՐԻԿԸ

Թարգմ. ԱՐՏ. ՀՈՎՀԱՆՆԻ

ՄԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ — ՍՍՌԱ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

Գնահրատ № 1455
Գրառեպվար № 6022
Հայպոլիգրաֆ պատ. 580
Տիրաժ 5000

ԿԱՐՄՐԻԿԸ

Արշալույսի կարմրավուն շողերը դանդաղորեն թափանցում էլին անտառի խորքը և ցրվում մարգագետինների, կաղնիների և շագանակենիների վառ-կանաչավուն ճյուղերի վրա։ Վերջապես, արևի ճառագայթը նայեց խիտ տերևների միջից և շողշողաց գորգի նման խոռոչի մեջ փռված՝ փտած տերևներին ու ճյուղերին։ Փոքրիկ յեղջերուն, լուսից արթնացած, ցնցվեց ու բացեց աչքերը։ Ջահել կենդանին հագել եր բաց-դեղնավուն բըծերով նարնջագույն մուշտակ, և այդ հագուստն անտեսանելի յեր դարձնում նրան։ Բայց արշալույսի ուժեղացող շողերի տակ նա արդեն նշմարվում եր։

Յեղջերուն կարծես զգաց այդ։ Նա իր փոքրիկ դունչը կոխեց վոտքերի արանքը և մնաց անշարժ։ Սակայն վայրկենական այդ շարժումը մատնեց նրան։ Այդ միջոցին դեպի բունը սողացող գազանը մուտքի առաջ փռվեց գետնին։ Յերկու սրատես աչքեր նկատել էլին յեղջերուի շարժումը։ Գազանն ահարկու հայացքով դիտում եր բնի խորքում թաղնված կարմրավուն կենդանուն։ Մի քանի րոպե անց՝ նրա կողքին մեկ ուրիշն էլ յերևաց։

Մոտալ ապավորություն առաջացրին այդ յերկու լուսանները (рыси) իրենց մեծ թաթերով և ուժեղ մկաններով։ Գազանները պատրաստվեցին թռիչքի։ Նրանց կլոր ու ահարկու գնչերը ծածկված էլին գանգուր մազերով։

Ականջների ծայրերին ցցված եղին փնջավոր մազեր։ Ներքանք մի քանի վայրկյան ուշադրությամբ դիտում եղին ջեղջերուին։ Վոչ մի ձայն, վոչ մի խշխշոց դեռ նրա ականջին չեր հասել, բայց ինչ-վոր անորոշ նախազգացում հանկարծակի ցնցեց նրա մանկական ջղերը, և նա շրջեց գլուխը՝ չորս կողմը նայելու համար։ Այդ ժամանակ գեղեցիկ վորջը սոզացին յերկու գորշ մարմիններ։

Միայն մի քանի ժամ եր, ինչ ծնվել եր ջեղջերուն։ Նա դեռ լուսանների և ուրիշ թշնամիների մասին գաղափար չուներ։ Բայց և այնպես նա զգաց, վոր այդ սովերները վտանգավոր են։ Նա լայն բացեց իր փոքրիկ բերանը և աղեկտուր ճիչ արձակեց։ Այդ կսկծալի ձայնին մայրն արձագանքեց շատ մոտիկից և վոստնեց դեպի վորջը։ Սովորաբար նա միշտ վորջին մոտենում եր անաղմուկ, վորպեսզի նրա տեղը վոչ վոք չիմանա։ Բայց այժմ նրա ձագին վտանգ եր սպառնում, նա մոռացության ավեց ամեն ինչ և ընթրեց ամենակարճ ճանապարհը։ Մայրը քնքշաբար հոտոտեց իր ձագին և լիզեց նրա ամբողջ մարմինը։

Փոքրիկ ջեղջերուն դողում եր։ Մայրը նայեց չորս կողմը, վորպեսզի պարզի նրա վախի պատճառը։ Մոր հանկարծակի յերևալուց հետո՝ լուսանները խուճուճ թաղնվեցին. իսկ յերբ մայրը կռացավ դեպի ձագը, նրանք սկսեցին առաջ շարժվել։ Հետո նրանք բաժանվեցին միմյանցից և ջեղջերուին շրջապատեցին աջից ու ձախից։

Մեկ լուսանի համար՝ ձագին պաշտպանող մայրը՝ վտանգավոր թշնամի չե։

Յերկու կողմից միաժամանակ հարձակվելով, նրանք



կարող եյին շփոթեցնել յեղջերուին և խուսափել նրա սուր կճղակներից։

Յերբ մայր յեղջերուն բարձրացրեց գլուխը և շուրջը նայեց, նա իսկույն նկատեց ընդամենը յերկու մեծ հեռավորության վրա կանգնած գազանին, վոր նայում եր կատաղի հայացքով։ Գազանն իր գաժան հայացքը հառել եր յեղջերուին և պատրաստ եր թռիչքի։ Կռվում փորձված մայր յեղջերուն չսպասեց մահաբեր թռիչքին և ճչալով նետվեց առաջ, վեր բարձրացնելով պողպատի նման ամուր կճղակները։ Լուսանը չհամարձակվեց մարտա հրավերն ընդունել և մրթմրթալով յետ-յետ գնաց։ Մայրն իսկույն նայեց մյուս կողմը հավաստիանալու, վոր իր ձագն այլևս վտանգի մեջ չե։ Եվ լուսանը պատրաստվում եր հարձակվելու նրա վրա։

Մայրը չեր կարող կանխել թռիչքը, սակայն նա իր ուժեղ հարվածով ի վիճակի յեր թռուցանելու այն։ Այդ հարվածով յեղջերուն չկարողացավ յետ պահել լուսանին հարձակվելուց, բայց նրա կողերի վրա թողեց յերկար կարմիր սպի, և գազանի ճանկերը չկարողացան խրվել փոքրիկի մարմնի մեջ։ Մորը չհաջողվեց հեռացնել լուսաններին և, վորպեսզի թշնամիների ուշադրությունը հեռացնի իր ձագից՝ նա դուրս յեկավ վորջից։

Բայց նախքան նրա կռվի պատրաստվելը, արու լուսանը բռնեց նրա կոկորդից, իսկ եգը՝ ծոծրակից։ Նրանք ատամներով պոկում եյին նրա միսը և ճանկերով ծվատում իրանը։ Յեղջերուն կռվում եր մինչև վերջին րոպեն, սակայն լուսանները հաղթեցին նրան։ Այ-կա րմիրը արյունն սկսեց հոսել թռչնած տերևների վրա։

*
* *

Վորսկան Ոհանը նստած եր բլուրի վրա և հիանում եր բացվող արշալույսով։ Նա ձախ ձեռքով բռնել եր հրացանը, իսկ աջով՝ շոյում եր մորուսը։ Ծագող նարնջագույն արևաշողերն այս անգամ նրան սովորականից ավելի գեղեցիկ թվացին։ Այդ առավոտ Ոհանը չեր ուզում վորսի գնալ. նա սովորականից կես ժամ շուտ արթնացավ և բլուրը բարձրացավ միայն արևածագը դիտելու համար։

Բայց հանկարծ բլրի ստորոտի խիտ ծառերի միջից նրա ականջին հասան խռխռոց, վնչոց, աղմուկ, տերևների խշշոց։ Ոհանն իսկույն վեր թռավ տեղից և արագ իջավ անտառի խորքը, ուր լուսանները ծվատում եյին իրենց զոհին։ Մինչև կյանքի վերջին շունչը կռվող յեղջերուն, այլևս չեր դիմադրում։ Լուսանները կատաղաբար կռծում եյին նրա կոկորդը, յերը յերևաց Ոհանը։ Հաղթության պահին վորսորդի յերևալը՝ կատաղեցրեց նրանց, վորոնք մոռացության առավ ամեն մի զգուշություն, գազանի հարձակվեցին Ոհանի վրա։

Ոհանն իսկույն նշան բռնեց արուլին. գազանը վեր ցատկելով ընկավ իր զոհի վրա։ Մինչև նրա սատկելը, եգ լուսանն անհայտացավ։ Ոհանը շատ ափսոսաց, վոր մյուսին էլ սպանել չկարողացավ, վորովհետև նրանց գեղեցիկ մորթին կարելի չեր թանկ վաճառել։ Նա մոտիկից զննեց յեղջերուին և, համոզվելով, վոր նա կենդանի չե,



պայուսակից հանեց յերկար փոկը, կապեց նրան և ծառից այնքան բարձր կախեց, որ գազանները չկարողանան հասնել։ Հետո Ոհանը մոտեցավ հորթին։ Փոքրիկ կենդանին անմեղ և զարմացած հայացքով դիտում էր նրան։ Նա գրեթե չվախեցավ, յերբ Ոհանը ձեռքը յերկարացրեց դեպի նա։ Բայց յերբ վորսորդը ձեռքը դրավ նրա քնքուշ դնչին, յեղջերուն զգաց մարդկային անհաճելի հոտը, դժվարությամբ վերկացավ տեղից և նորից աղիողորմ ու վշտալի մնչաց, վորն այժմ նրա մայրն այլևս չէր կարող լսել։ Նա փորձեց փախչել, բայց Ոհանը բռնել էր նրան ամուր և շոյում էր քնքուշ։

Մի քանի րոպեից հետո նա հանգստացավ և պառկեց վորսորդի գրկում։ Ոհանն ուսից կախեց սպանված լուսանին, ավելի հարմար գրկեց փոքրիկ յեղջերուին և բլուրի մյուս կողմով վերադարձավ տուն։

*
* *

Ոհանի մոտ՝ փոքրիկ կենդանին շուտ ընտելացավ նոր կյանքին։ Նրան կովի կաթ եյին տալիս և բանջարանոցում արածեցնում։ Ոհանը նրան շատ էր փայփայում, իսկ դրա փոխարեն նա շատ հավատարմությամբ էր հատուցում.— միշտ նրա հետ տան էր գալիս և աղիողորմ ճչում էր, յերբ վորսորդը նրան իր հետ չէր տանում։

Մի քանի ամսից հետո յեղջերուի մորթու վրայից վոշընչացան բաց-դեղնավուն բծերը և նա դարձավ կարմրագույն։ Նա շատ գեղեցկացավ։ Վորսորդը նրա անունը դրեց «Կարմրիկ»։

Կարմրիկը հետզհետե մտերմացավ կովերի, փոքրիկ հորթի և չերկու դանդաղաշարժ եզների հետ։ Իսկ չերը նրա չեղջյուրները դուրս չեկան, այդ ընտանի կենդանիների փոքրիկ աշխարհում նա բռնեց առաջին տեղը։ Վաչկատամ փոքրիկ չեղջերուն գերազանցեց բոլորին։ Ժամանակի մեծ մասը նա անց էր կացնում վորսորդի խրճիթում, նրա կողքից չէր հեռանում, իսկ Ոհանն էլ՝ միշտ շոյում ու գուրգուրում էր նրան։ Չերը Կարմրիկը մեծացավ և նրա չեղջյուրները ճյուղավորվեցին, նրա մեջ խիստ ատելություն առաջացավ դեպի խոզերն ու ոձերը։ Դեպի խոզերն ունեցած նրա ատելությունը վոչնչով չէր կարելի բացատրել.— չերը աչքովը խոզ էր ընկնում՝ աշխատում էր նրան բարկացնել։ Իսկ չերը Կարմրիկը, վորպես պատիժ, Ոհանից մարակի հարված էր ստանում, խռովում էր ու թաղնվում ամբարի չեռը։ Ոձեր նա հաճախ էր վորսում։ Շոգ որերին Կարմրիկը բաբձրանում էր բլուրի ստորոտի արևաշող մասը, քշում ոձերին բնեբից և սուր կճղակներով ճմրում նրանց։ Ոձերին ատում էր նաև վորսկան Ոհանը։

Բլուրի հարավային մասը, ուր միշտ վեռվեռում էին արևի կիզիչ շողերը, կազմում էր իժերի սիրելի տեղը։ Ժամանակ առ ժամանակ, չերը ոձը խայթում էր վորևե մեկին, բնակիչներն արշավ էին կազմակերպում՝ այդ զզվելի սրաբածներին վոչնչացնելու համար։ Բայց սովորաբար իժերը միշտ զգուշ էին ու այնքան լավ էին թաղնվում, վոր նրանց չէր հաջողվում ոպանել այդ սողուններին։

Ոհանին վիճակվեց հանդիպել ոձերի, այն էլ շատ մոտիկից: Մեկ անգամ, յերբ նա կանգնած եր բլուրի գագաթին, նրա վոտքերի տակի քարը պոկվեց գետնից և Ոհանը, քարերի ու խիճերի հետ, ցած գլորվեց: Ցած գլորվելիս նրան հաջողվեց բռնել մոտակա թփի ճյուղից, սակայն այդ պահին նա լսեց մի թշշոց, վորը նրան լավ ծանոթ եր:

Վորսորդի մազերը բիղ-բիղ կանգնեցին: Նա իսկույն բաց թողեց ձեռքը և նորից ցած գլորվեց:

Գլորվելիս Ոհանի գլուխը դիպավ ծառի արմատին, ուշաթնաց յեղավ, և այդ դրությամբ սկսեց գլորվել ցած, տանելով իր հետ խիճի մի ամբողջ կույտ: Գլորվելիս կոտրվել եր նրա վոտքը: Իհարկե, նա չգիտեր, վոր իր հետ գլորված յերկու քարը՝ փրկեցին նրա կյանքը: Գլորվող խիճերի ձայնից թշշացնելով փախավ ոձերի մի ամբողջ կծիկ:

Ոհանն անշարժ պառկած եր քարերի մեջ:

Կարմրիկը, վոր տիրոջ հետ կանգնած եր բլուրի գագաթին՝ այդ դժբախտության միջոցին, իսկույն յետ թռավ և զարմացած սկսեց դիտել վրվածքը: Միայն մի քանի րոպե տևեց նրա զարմանքը, հետո նա իրեն զգաց մենակ և հետաքրքրությամբ ցած նայեց: Նրա վոտքերի տակից քարեր գլորվեցին և ընկան անշարժ պառկած Ոհանի վրա: Ձեղչերուն ուզեց տիրոջ յետևից գնալ, բայց ճանապարհը նրան չափազանց վտանգավոր թվաց: Կարմրիկն ընտրեց յերկար, սակայն հարմար ճանապարհ:

Ձերը ամեն ինչ հանդարտվեց, մի քանի լիժեր վերադարձան իրենց արևակեզ տեղը:

Բոլորից առաջ սողում եր ամենահասա և ծեր ոձը: Մոտենալով անշարժ պառկած Ոհանին, նա մարտական դիրք ընդունեց. իսկ մնացած ոձերը յետ նահանջեցին, կարծես թե՝ գիջում են նրան հաղթությյան պատիվը: Ոհանը չեր շարժվում, և ոձը չմոտեցավ նրան: Նա, մարտական դիրք ընդունած, սպասեց մոտ տասն րոպե: Նա ուզում եր առաջ սողալ, բայց այդ րոպեին Ոհանը շարժվեց, սկսեց ուշքի գալ: Նա շարժեց ձեռքը, փորձեց բարձրացնել և վոտքը, բայց չկարողացավ: Ցավից նա հառաչեց: Ոձն իսկույն մարտական դիրք ընդունեց: Զգվելի թշշոցը Ոհանին բոլորովին ուշքի բերեց, նա չեր շարժվում. փոքր ինչ բացեց աչքերը, նայեց շուրջը և իսկույն նկատեց ոձին:

Նա գիտեր, վոր քանի ինքը պառկած է, ոձը յերբեք նրա վրա չի հարձակվի: Բայց վոր քան ժամանակ նա կարող է անշարժ պառկած մնալ: Կոտրված վոտքը սաստիկ ցավում եր: Բայց յերբ մտածեց, վոր մյուս ոձերը կարող են ըներից դուրս գալ, սառը քրտինք պատեց նրա ճակատը: Դարձյալ գլուխն սկսեց պտույտ գալ. նա լարեց բոլոր ուժերը, վոր ուշագնաց չլինի: Նա ամեն կերպ մտածում եր այդ դրությունից դուրս գալու մասին: Նա մտածում եր.— վերցնել մի բուռը խիճ և շպրտել թշնամուն: Բայց թունավոր թշնամին նրա թույլ ձեռքից ավելի ուժեղ եր: Գլուխը նորից սկսեց պտույտ գալ, և այդ րոպեին նա ինչ-վոր վոտնաձայն լսեց:

Սակայն Ոհանը չեր համարձակվում գլուխը շրջել, բայց և այնպես տեսավ, վոր ոձը գլուխը դարձրեց դեպի հա-



կառակ կողմը։ Մի րոպե անց՝ յերևաց Կարմրիկը «ռազմական խաղով», վորով նա սովորաբար հարձակվում եր խոզերի վրա։ Նա յերևաց աջ կողմից, հեռացրեց իժի ուշադրությունը Ոհանից և հաղթական կերպով գետին իջեցրեց իր յեղջյուրների սուր ծայրերը։ Կայծակի արագությամբ ոձը հարձակվեց նրանց վրա և սկսեց թունը թափել անզգա յեղջյուրներին։ Մի քանի անգամ յեղջյուրները կծելուց հետո՝ ոձն ուզեց հեռանալ, բայց յեղջերուն ոձից ավելի ճարպիկ եր։ Նա սուր կճղակով խփեց ոձի մեջքին և կոտրեց նրա ողնաշարը։ Մահաբեր գլուխը թուլացած կախ ընկավ. իրանը՝ դեռ ուժով լի՝ շարունակում եր գալարվել։ Մյուս հարվածը դիպավ գլխին, վորից հետո Կարմրիկը սկսեց կատաղաբար կոխկրտել գալարվող իրանը։ Նա միայն այն ժամանակ զգաց, վոր հաղթությունը իր կողմն ե, յերբ ոձի վերջին ողակը բլթթի նման տափակեց։

Ոհանը նորից ուշաքնաց յեղավ։

Յերբ նա ուշքի յեկավ, Կարմրիկը կանգնած եր նրա կողքին և լիզում եր նրա յերեսը։ Վարսորդը շոյեց նրա քնքուշ դունչը և աստմները հուպ տալով վերկացավ տեղից ու կաղալով գնաց դեպի մոտակա խրճիթը։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0390046

923